Ամենուր շատ աղմկոտ էր: Ղուկասը որտե՞ղ կարող էր խաղաղություն գտնել:

Մեծ աղմուկ

Ռիչարդ Մ. Ռոմնի
Եկեղեցու ամսագրեր
(Հիմնված է իրական պատմության վրա)

Ղուկասը հառաչեց: Ամենուր շատ աղմկոտ էր: Նրա եղբայրները՝ Թեդն ու Ջոնը, կրկին վիճում էին: Նույնիսկ միջանցքում նա լսում էր նրանց բարձր ձայները դռան հետևից: Իսկ նրա քույրը՝ Լիզին, կրկին բարձր միացրել էր երաժշտությունը: *Դմփ: Դմփ: Դմփ:* Նա միշտ լսում էր ցածր նոտաների կայուն զարկերը:

Ղուկասը փորձեց խնդրել իր եղբայրներին դադարեցնել վեճը: «Գնա այստեղից»,- ասաց նրան Թեդը: Ապա Ղուկասը խնդրեց Լիզիին ցածրացնել երաժշտության ձայնը: Նա պարզապես ավելի բարձրացրեց երաժշտության ձայնը:

Ղուկասը ցանկացավ դուրս գնալ, որտեղ նա կարող էր մտածել: Բայց անձրև էր գալիս:

Այնուամենայնիվ, կար մի լուռ անկյուն, որտեղ Ղուկասը կարող էր գնալ: Երեկ նրա ծնողները տվեցին նրան մի սենյակ, որը նա ստիպված չէր կիսել Թեդի և Ջոնի հետ: Այն նկուղում էր: Այնտեղ կարող էր տեղավորվել միայն մի մահճակալ ու մի սեղան: Սակայն իր սենյակում Ղուկասը կարող էր փակել դուռը և խուսափել աղմուկից:

Ղուկասը ցած իջավ իր նոր սենյակը: Նա նայեց իր շուրջը գտնվող արկղերին, որոնք ավելի վաղ բերել էր ցած: Նա տեսավ Հիսուսի նկարը արկղի մեջ: Ղուկասը այդ նկարը ստացել էր իր մկրտության օրը: Դրան նայելով՝ միշտ խաղաղություն էր զգում:

Ղուկասը նկարը հանեց արկղից: Նա դրեց այն սեղանին: Ապա ծնկի իջավ աղոթելու: «Երկնային Հայր,- ասաց Ղուկասը,- երբեմն այստեղ շատ աղմկոտ է: Խնդրում եմ, օգնիր ինձ խաղաղություն գտնել»:

Ղուկասը պառկեց իր անկողնում: Նա մտածեց Հիսուսի մասին: Նա Երեխաների խմբում սովորել էր, որ Հիսուսը կարող էր միշտ մոտ լինել իրեն: Եվ Սուրբ Հոգին միշտ կարող էր բերել խաղաղություն:

Շուտով մայրիկը և հայրիկը կվերադառնան աշխատանքից: Նրանք կխոսեն Թեդի և Ջոնի հետ: Վիճաբանությունները կդադարեն: Որոշ ժամանակով: Նրանք կխոսեն Լիզիի հետ: Լիզիին կցածրացներ երաժշտության ձայնը: Որոշ ժամանակով: Մինչև մայրիկը և հայրիկը կրկին կգնային:

Բայց այժմ Ղուկասը պառկած էր իր մահճակալին: Նա նայում էր Հիսուսի նկարին: «Խնդրում եմ, Երկնային Հայր»,- շշնջաց Ղուկասը: «Խնդրում եմ, օգնիր ինձ խաղաղություն զգալ, անկախ այն բանից, թե ինչ է կատարվում տան մյուս անկյուններում»:

Ավելի ուշ թակեցին նրա ննջարանի դուռը: «Կարո՞ղ եմ ներս գալ»,- հարցրեց մայրիկը: «Ինչպե՞ս ես»:

«Թեդը և Ջոնը կրկին վիճում էին»,- ասաց Ղուկասը: «Իսկ Լիզին շատ բարձր է միացնում երաժշտությունը»:

«Ես գիտեմ: Դժվար է, այդպես չէ՞»,- ասաց մայրիկը: «Հայրիկը այս պահին խոսում է քո եղբայրների հետ: Իսկ ես կխոսեմ Լիզիի հետ այս երեկո: Բայց նախ ես ուզում էի տեսնել, թե դու ինչպես ես»:

«Ես լավ եմ: Ես ուրախ եմ, որ ունեմ այս սենյակը»,- ասաց Ղուկասը:

«Ես նույնպես»,- ասաց մայրիկը: «Տեսնում եմ, որ Հիսուսի նկարը դրել ես սեղանին»:

Ղուկասը ժպտաց: «Այո: Եվ Նա օգնելու է ինձ իմ սենյակը խաղաղ վայր դարձնել»: ●

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Գրեք կամ նկարեք, թե դուք ինչպես կարող եք խաղաղություն զգալ ձեր տանը:

ՆԿԱՐԱԳՐԵՑ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԵՎԵՆ